ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԻՐ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔԸ ՄԱՏՈՒՑԵՑ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Դեկտեմբերի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ այցը Սպիտակ և Գյումրի հարգանքի տուրք էր 1988 թ. աղետալի երկրաշարժի հազարավոր զոհերի հիշատակին:

Վաղ առավոտյան Վեհափառ Հայրապետը, Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ուղեկցությամբ, ուղևորվեց Սպիտակ: Այստեղ էր նաև ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ԱԺ նախագահը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի և Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանի ուղեկցությամբ, առաջնորդվեցին Սպիտակի Ս. Հարություն նորակառույց եկեղեցի: Ս. Հարությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նվերն է աղետյալ սպիտակցիներին, որ կառուցվել է երկրաշարժից հետո՝ խորհրդային տարիներին հիմնովին ավերված Ս. Աստվածածին եկեղեցու տեղում: Նորակառույց եկեղեցում Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն: «Որպես նորընտիր Կաթողիկոս եկել ենք Մեր հարգանքի տուրքը մատուցելու զոհվածների հիշատակին և աղոթք բարձրացնելու առ Աստված, որպեսզի Տերը իր ողորմածությամբ խնայի մեր ժողովրդին և ապրեցնի խաղաղ ու ստեղծագործ կյանքով»,- իր օրհնությունը բաշխելով սպիտակցիներին, ասաց Նորին Սրբությունը: Ապա Վեհափառ Հայրապետն ու ԱԺ նախագահը ծաղկեպսակներ զետեղեցին անմեղ զոհերի հուշարձանին: Սպիտակում Վեհափառ Հայրապետն իր հարգանքի տուրքը մատուցեց նաև Սպիտակի նախկին քաղաքապետ նորոգ հանգուցյալ Սուրեն Ավետիսյանի հիշատակին՝ այցելելով նրա շիրիմին և հոգեհանգստյան կարգ կատարելով:

Սպիտակից Վեհափառ Հայրապետն ուղևորվեց Գյումրի՝ այս անգամ իր զորակցությունն ու օրհնության խոսքը հայտնելու աղետյալ գյումրեցիներին:

Վեհափառ Հայրապետին ու Գյումրի այցելած ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին դիմավորեցին Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, քաղաքային իշխանության բարձրաստիճան պաշտոնյաներ, Շիրակի թեմի հոգևորականաց դասը՝ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանի գլխավորությամբ:

Գյումրիի Շիրակ գերեզմանատանը, ուր հանգչում են երկրաշարժից զոհված գյումրեցիները, Վեհափառ Հայրապետն ու ՀՀ նախագահը ծաղկեպսակներ դրեցին խաչքար-հուշարձանին: Ապա Վեհափառ Հայրապետն ու հոգևոր դասը հոգեհանգստյան աղոթք ասացին զոհերի հիշատակին: Գերեզմանատնից Նորին Սրբությունն ու Հանրապետության նախագահն ուղևորվեցին դեպի Ս. Աստվածածին /Յոթ Վերք/ եկեղեցի, ուր մատուցվում էր Ս. Պատարագ՝ նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակին:

Գյումրիի գերեզմանատանը

Հավարտ սրբազան արարողության Ամենայն Հայոց Կաթողիկոսը հավատքով զորանալու և միաբանվելու հորդորով դիմեց ներկա հավատացյալներին:

«Տասնմեկ տարիներ են անցել: Սակայն ամոքված չեն ձեր հոգու վերքերը և պիտի շարունակեն ցավ պատճառել դրանք, քանի դեռ վերացված չեն հեպևանքները ահավոր երկրաշարժի: Մենք հավատում ենք. մեր ապավինությունը Աստված է, մեր հայրենի պետությունը և մեր ժողովուրդը, որոնք միասնական ջանքերի շնորհիվ պիտի կարողանան շենացնել երկիրը մեր, զորացնել հայրենի տունը, պիտի կարողանան ուրախությունը և բերկրանքը վերստին վերադարձնել գյումրեցուն և աղետի գոտու ողջ բնակչությանը, քանզի մենք ունենք ավետարանական պատգամը, թե՝ «Միայն հավատա և կեցցես»:

Մենք պետք է գիտակցենք, որ այս տունը կառուցողը, շենացնողն ու զորացնողը մենք ենք՝ որպես ազգ, որպես Եկեղեցի և որպես պետություն: Ուրեմն, սիրելիներ, այդ գիտակցությամբ միաբանվենք, այդ գիտակցությամբ դառնանք մեկ ոգի, մեկ կամք, մեկ բռունցք՝ մեր ժողովրդին առաջնորդելու հաղթանակից հաղթանակ, դեպի պայծառ ապագա»,-ասաց Վեհափառ Հայրապետը:

Վերադարձին Վեհափառ Հայրապետն այցելեց Մուղնու Ս. Գևորգ եկեղեցի, ծանոթացավ վերանորոգման աշխատանքներին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ